

դիմումներ և ուղղել իրեն, խոստանալով այդ ձայները՝ որպէս Հայաստանեայց եկեղեցու ձայն, միացնել ուսուցումիւմ դասակարգի ձայներին և այդպիսով հասցնել ուր հարկն է, որպէս զի ջնջուի անարգ մահուան պատիժը մեր օրէնսդրութիւնից և չ'արատաւորի քրիստոնէի խիղճը՝ արգարադատութեան մեծադղորդ անուան ներքոյ:

Կորչի մահուան պատիժը, կորչի կախաղանն ու գընձ դակահարութիւնը: Միացրէք ձեր և ձեր ժողովրդի ձայնը, արժանաւոր հովիւներ, մի մոռանաք, որ բազմութեան ձայնը Աստուծոյ ձայն է և կենսաբեր:

Յ. Յ. Վ. Մ.

ԱՅՂԸՐ ԳԵՅԼ

(Մարտիկանայ ինչ լէճ.)

Արագածից դէպ հարաւ
Բարձրաւանդակ մի տեղում
Շատ բարեհամ ջրոց հետ
Կայ մի ծովակ նահապետ.
Եւ ինչպէս որ ասում են
Մեր աշխարհի դարևոր
Վէպ ու զրոյցը բիւրաւոր,
Նա կոչւում է Այղըր գեօլ:

Աննման է Այղըր գեօլ,
Չունի մի բան իւր բոլոր՝
Որ չըլինի փառաւոր.
Աննման է Այղըր գեօլ,
Չունի մի բան հին ու նոր՝
Որ չըլինի ահաւոր:

Երեք դհից թեր ու ծուռ՝
 Իբրեւ գօտի ասղարուր
 Խտըտում են ծովակիս
 Արևակէզ թուխ ժայռեր.
 Իսկ մի դհից, ուր Մասիս
 Զգում է իւր սուրբ պատկեր
 Ծեր Արաքսի ջրոց մէջ
 Եւ լող տալիս նրանց մէջ,
 Ունի ծովակս լայն ու նեղ
 Անց ու դարձի մուտքի տեղ:

Մտնենք այժմ այս ծովակ,
 Որի գեղով զմայլեց
 Հայկի որդին Արմենակ,
 Նա՝ որ սիրեց Արագած
 Քան զամենայն արարած:

Մեր հայրենի այս ծովակ՝
 Որ կըր է ինչպէս ակ,
 Որպէս շատերն են ասում,
 Ոչ տուտ ունի և ոչ տակ,
 Թէ որ ակից, որ ծակից,
 Թէ որ հողի յատակից
 Զուր է խմում լիուլի
 Եւ ծովանում գողունի,
 Այս բան գիտէ մէկ Աստուած,
 Մէկ էլ ինքն Արագած:

Այսպէս անշարժ ծով կտրած
 Նա կանգնած է վեհապանծ
 Իւր ոտի տակ թաւալող
 Մեծամօրի քիպ դիմաց,
 Եւ զերթ նշխար, սուրբ հաղորդ
 Նա զրկում է այս գետին
 Իւր ջրերի աւելորդ.
 Բայց այս ոչ թէ աշկարայ

Իւր լայնանիստ ափերից,
Այլ ի ծածուկ ակամայ
Իւր խորագոյն յատակից:

Տեսնենք թէ, էլ ինչ ունի
Այս ծովակը գեղանի:

Ծաղկի ծառի թփի տեղ՝
Իւր ճմճմայ ափերում
Ուղիղ, կամ թեք, կամ առչեղ
Դարէ ի դար կան ցցուած
Միայն եղէգ ծառացած,
Որոց չաչիւն չառաչիւն՝
Ինչպէս գոմփոռ շան հաջիւն,
Թափում են մահ ու սարսափ
Հէք անցորդի, լսողի
Մարմնոյ վրայ գերթ տարափ,
Զի զիլ քամին մոլեգին
Երբ շարժում է եղէգին,
Քար ու քույր քարանձաւ
Ծղրտում են առանց ցաւ:

Այսպէս այստեղ զօրն ի բուն՝
Մինն յայանի, մինն թաքուն,
Մինը արթուն, մինը քուն
Ծղրտում են ու ծըլում,
Ժըլժըլում են ու ժըլում
Պէտպէս թռչուն ու զեռուն,
Իրենց խինդ, իրենց խնդիր,
Իրենց սրտի ցաւ ու խոց
Հանապազ աւանդելով
Արագածի երկնայնոց:

Ըստ ասութեան մեր հին հարց՝
Մեծ ու մանր հետ ձկանց
Սրա մէջ են և ապրում
Նժոյգ ձիեր ոսկեպանձ,

Ուժեղ գոմէշք քաջալանջ,
 Եւ հրէշներ մարդախանձ,
 Որոնք արօտ դուրս գալով
 Առաւօտից առաւօտ
 Իւր սիգաւէտ ափի մօտ,
 Խառնըւում են սանձարձակ՝
 Անդ արածող, անդ դիմող
 Ձիոց գովչոց երամակ,
 Եւ այս տկար, անարի
 Էակներից հողեղէն
 Մեղ պարգեւում իրենց պէս
 Ձագ ու քուռակ հրեղէն,
 Իսկ հրէշներ մարդախանձ՝
 Ինչ ափին է մօտենում,
 Կամ ջուրն ընկնում, կամ լողում,
 Կուլ են տալիս ողջ հում հում։

Ահա այս է իսկ պատճառ,
 Որ մարդն իրեն ապիկար
 Միշտ զգալով փախել է
 Այս ծովակից ահահար,
 Ձը կանգնելով ոչ երբէք
 Սրա մօտին մի դադար,
 Եւ ծովակն աննըման՝
 Սիրճն ինչպէս մեր Սևան,
 Արմենակի օրերից
 Եղել է միշտ բնութեան,
 Ձեռնոց, թռչնոց վարժարան։
 Օրհնեալ լինի Հայաստան,
 Որ տուել է իւր օրգւոց
 Այսպէս լճեր սրբազան

Մանակ վարդ, Ամասուհի.